

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարեկանը 6 րուբլի, Լուսնային համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция „Мшакъ“, Կամ Tiflis, Rédaction „Mschak“, Տ է 1 է ֆ օ ն № 253.

Պարագրաֆները բաց է առաւտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողաւորին 10 կոպէկ, Տ է 1 է ֆ օ ն № 253.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐ ԵՐԵՎԱՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Հրէաների իրաւունքները ընդարձակուած. — Ներքին ՏԵՍՏԻՄԵՆՏ. Մասնաւորութիւն. — Թերի դատարարութեան պատուիր. Հանրամատչելի ներկայացում. Նամակ Միւրից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՏԻՄԵՆՏ. Պատերազմի շուրջը. Արտաքին լուրեր. Հեռ. Գիրքեր. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀՐԵՎԱՆԻ ԻՐԱՎՈՒՆԻՔՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ

«Մշակի» այսօրվայ հեռագիրները մէջ մեր ընթերցողները կը կարդան Բարձրագոյն Ուկազը, որ վերաբերում է հրէաներին և որով ընդարձակվում են որոշ չափով հրէաների իրաւունքները Ռուսաստանում:

Ինչպէս յայտնի է, հրէաները իրանց մշտական բնակավայրեր ճանաչված նահանգներէն դուրս իրաւունք չունէին նոր բնակութիւն հաստատել: Այժմ Ուկազը տալիս է մի քանի զէպքերով այդ իրաւունքը, այն է, երբ հրէան աւարտել է բարձրագոյն ուսման դասընթացը Ռուսաստանում, երբ նա ունի առաջին գիւղիայի վաճառականութեան կոչում, երբ գիւղատնտեսական մէջ եղած հրէան ծառայութեան է մտնում համաձայն բեկրուտային կանոնադրութեան և նոյնպէս երբ նա մշտական արհեստով պարագող է, համաձայն եղած օրէնքի որոշ յօդուածի: Առաջին երկու կարգի արտօնեալները ընտանիքի անդամները հաւասարապէս օգտուում են նոր բնակութեան իրաւունքով:

Այնուհետեւ մանրամասնօրէն ցոյց են տրված այդ իրաւունքների հետ կապված մի քանի ուրիշ արտօնութիւններ՝ վերաբերեալ անտեսական յարաբերութիւններին, գործակատարների ու սպասաւորներին, այլ և կալուածական խնդիրներին համապատասխան կարգաւորում:

Ռուսաստանի գանապան տեղերում ապրող հրէաները մեծ ուրախութեամբ կը կարդան Ուկազի ընծայած նոր իրաւունքների յայտարարութիւնը, որոնց անհրաժեշտութիւնը զգացվում էր կեանքի մէջ: Հրէաները ներկայ Ուկազի գործութեամբ մի քաջ առաջ են գնում քաղաքացիական իրաւասութեան ասպարէզում:

Մենք ողջունում ենք քաղաքացիական օրէնսդրութեան այդ նոր ընդարձակումը, հաստատու հաւատարմով, որ նա կը տայ կեանքի մէջ բարեբար հետաւորներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՏԻՄԵՆՏ

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

Մ. Աւետիսեան «ԿՈՅՐ ԲԱՆԻՆ», քերթված: 24 էրես, տպւած Բագու: Գինը 10 կոպ:

Վերջին ժամանակները Կովկասի հայ գրականութիւնը հեղիւզում է մանրիկ, չնչին պատկերների, պատմվածքների և էպիգրամների թարգմանութիւններով: Դրանց անգին մեծամասնութիւնը նոյն իսկ լիզուի կողմէն են կազմում, իսկ մի խոշոր մասն էլ ընտրութիւնն անաշուղ է: Նրանց մեծ մասը ծառայում է կամ թարգմանիչների կամ հրատարակիչների համար մի քանի կոպէկ աշխատանք: Մանրանում, ողորմելիանում է թարգմանական գրականութիւնը:

Նոյնն է և ինքնուրոյն մանրիկ գրվածքների գործը: 10—15 րուբլի ստանալու համար մանրիկ թխում են:

Այդ տեսակէտն արդէն պատրաստ գլխումս, ես մօտեցայ վերեւում յիշված «քերթված»-ին: Սկզբի երեսները նա էլ անհամ էր, անբովանդակ. Թէհրանում վիճում են իրար հետ հայ ուսուցիչները: Բայց անա սկսվում է «Կոյր Բանի»», պարսիկ աղանդաւորի երգը. Նա գրված է ուսանաւորով, բայց ուսանաւորի ձեռք է կարգացվում: Կոյրը երգում է մարգ-

կային բռնակալութիւնը, խեղճերի կրած տանջանքը, բանտի շղթաները, նրանց շառաչը: Նա երգում է Բարի մանուկին, հօր ու մօր հետ միասին ստրկի խրճիթում, այնտեղ ծնված, այնտեղ էլ մեծանալիս: Ահա այդ մանուկն է, որ դուրս է պանում քաղցի-ծարաւի բռնութեան շղթայից և աղատութեան երգիչ դառնում: Բայց նա երկար մնալով խաւար մթութեան մէջ, դուրս գալուց յետոյ կուրանում է:

Ջօրեղ է երգի լիզուն, հօր ու բովանդակային են նրա պատկերները:

Պատակ

ԹԵՐԻ ԴԱՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՊՏՈՒՂՆԵՐ

Մօտ օրերումս Չանգլիի գիւղում գտնւում է 16—17 տարեկան աղջիկ: Նա նշանադրված է ինչում իր սիրած երիտասարդի հետ: Իսկ երիտասարդը, աղքատութեան պատճառով, չէ կարողանում վճարել մեղանում դեռ շարունակվող «բաշլը» կոչվող զոգլիի տուրքը, ուստի աղջկայ կողմէն չէ ուղարկւում այլ ևս բրդը տալ իր նշանածին, իսկ բրդը յետ չէ ուղարկւում իր նշանածին, որին խիստ բարկացած եղբայրը՝ մի հարուածով գետնին է գործում բրդը: Չարագործը իր անձը դատաստանից ազատելու համար, գոհի դիակը՝ վրէժ թոկ գցելով՝ կարծում է առաստաղից, բայց, ի հարկէ, այդ կրքից կուրացած, բանականութիւնից զրկված ուղեղից ծնունդ առած միտքը չանցաւ... Մի էակ գոհ գնաց ուժեղի գաղաւթեան, և այդ ոչ առաջինն է և ոչ էլ վերջինը կարող է լինել, քանի դեռ մեր ժողովուրդը կը մնայ այժմանի խորին խաւարի մէջ, քանի դեռ նրան կառավորողն թունաւոր դատարարիչներ:

Երբ միջասեան դպրոցի դասընթացը աւարտում են որդիքը, ծնողները այլ ևս չեն հոգում, մտածում նրանց մտաւոր, բարոյական դաստիարակութեան մասին: Նրանց կարծիքով, իրանց դասակները արդէն կրթված ու խելահաս են դառած, ուստի մտածում ու հոգում են միայն նրանց ամուսնացնելու մասին: Ծնողների այդ տեսակ վերաբերմանը նկատելով, նրանք՝ դեռ պատանի հասակում, մտնում են երիտասարդների շրջանի մէջ, ուր խօսակցութեան գլխաւոր նիւթն են սիրային արկածներ: Եւ նրանց ամբողջ ուշ ու միտքը կենտրոնանում է ամուսնութեան հարցի վրա. էլ ոչ գիրք են անում ձեռք և ոչ լրագիր, մինչև անգամ սովորածներն էլ մոռացութեան են տալիս: Մի հասարակական ժողովում, երբ մի 18 տարեկան աղջկային լից մէկին (որը արդէն միջասեան դպրոցի դասընթացն աւարտել էր ու ամուսնացել) առաջարկվեց կազմված արձանագրութեան տակ ստորագրել, չէ կարողացաւ և մի ուրիշը նրա փոխարէն ստորագրեց:

Այդ տեսակ դատարարականները՝ նախ քան ամուսնանալը՝ սկսում են մի չը տեսնված շրջալուր ու ցոյգ կեանք վարել, որպէս «նշանվելու» լահիներ, խմել-քէֆ անել, ծխել, անառակ կեանք վարել, մեծ մասամբ պարտքով: Եւ եթէ ծնողները նրանց պահանջներին բուսարարութիւն չեն տալիս, այդ զէպքերով աւելի վատ միջոցների են դիմում—գողութեան... Իսկ անմիտ ծնողները սկսում են զանգատվել իրանց դասակներից, առանց հասկանալու, որ իրանք են պատճառ դարձել նրանց անկման: Մի անգամ մի 40 տարեկան մարդու հարցնում եմ. դու առաջ չէիր ծխում, էլ ինչո՞ւ ես սկսեցի այդ հասակում ծխել: Նա դեռ չը պատասխանեց՝ կինը վրա բերեց. «Ես եմ սակ» որ ծխէ, աղամարդու շնորհքն էլ ծխելն է»:

Ի հարկէ, մեղքը ամբողջապէս ծանրանում է նրանց վրա, որոնք այդ բանը հասկանալով հանդերձ՝ անտարբեր են մնում, և եթէ այդ կերպ երկար շարունակվելու լինի, շատ կը բազմանան հայ անուան անարգանք բերողները թիւը:

Մ. Ղազարեան

ՀԱՆՐԱՍԶՁՆԻ ՆԵՐԿԱՑՈՒՄՆ

Կիրակի, օգոստոսի 22-ին, Հաւաքարի Աւարաւանի նոր թատրոնում կայացաւ հայ և վրաց թատերասէրների խմբի ժողովրդական հանրամատչելի ներկայացում: Ներկայացրին նախ հայերէն լիզուով Գ. Սունդուկեանի «Պէպօ» երեք գործողութեամբ կօմիդիան և երկրորդ՝ վրացերէն լիզուով «Շարահատաւ դերասանը» վ. Գունիայի փոխադրութեամբ և մէկ գործողութեամբ վրացի լիզուով:

«Պէպօ» թողած ամբողջական տպաւորութիւնը ընդհանրապէս միջակեց աւելի լաւ էր: Երևում էր, որ թատերասէրները այս անգամ աւելի բարեխղճաբար էին վերաբերվել զէպի իրանց դերերը, որովհետեւ աչքի չէին ընկնում գեղարուեստական զգալի թերութիւններ: «Պէպօ» գրեթէ բոլոր դերակատարներն էլ բաւարար աշխուժեամբ կատարեցին իրանց դերերը, բացառութեամբ Պէպօի դերակատարի: Իրանց գոհացուցիչ խաղով առանձնապէս աչքի էին ընկնում օր. Բէգիշեան (Եփեմիայ), Գուլահան (Զիւլիֆա), Լաւրաբան (Կակուլի) և Ղուչեան (Գիքօ):

Մի բան, որ շատ վատ տպաւորութիւն է թողնում հանդիսականի վրա, այդ ներկայացման ժամանակ ժողովրդի կարգապահութիւնն անգարելն է, որ անհարկի էր դարձնում ներկայացման կանոնաւոր լսելը: Առհասարակ թատրոնի վարչութեան պարտականութիւնն է աշխատել, որպէս զի ժողովրդի մի մասը չը խանդաւրէր ներկայացումը իր անտեղի խօսակցութիւններով:

Նիտեալ անգամ, օգոստոսի 29-ին, մի և նոյն թատրոնում վրացերէն լիզուով կը ներկայացնեն Կ. Մխիթի «Բագրատ Դ» չորս գործողութեամբ պատմական դրաման:

Դահլիճը ամբողջապէս լիքն էր:

Լ. Բ.

ՆԱՍՏԱՎ ՄԵՐՎԻՅ

Օգոստոսի 17-ին Արդէն մի շարաթ է, որ խօթեան մուտք է գործել: Առաջին զէպը պատահեց կօղակների մէջ: Չոհ գնացին մի աւագ բժշկի հետ և մի քանիսները, հէնց ամբարանցից վերադառնալուն պէս, պարսից սահմանի մօտ: Այժմ շարունակվում է քաղաքի և գործի մէջ, բայց շատ թույլ կերպով: Մինչև այսօր քաղաքում հիւանդացի են 65 հոգի, որոնցից վախճանվել են 26-ը—4-ը հայեր, իսկ շրջակայ գիւղերացիները դեռ ևս ոչ մի զէպը չէ պատահել:

Այստեղ հրէայ և պարսիկ ժողովրդի մէջ տիրում է այն համոզմունքը, թէ հիւանդին հիւանդանոց տանելուն պէս, բժիշկները իսկոյն մեղցնում են, և յարմար զէպերում հիւանդացածին ծածկում, իսկ գիշերով փախցնում կամ քակում թաղում են մեռածին. բայց ցաւալիս այն է, որ դեռ մեր հայերի մէջ ևս կան այդպիսի խելքի տէր մարդիկ: Երկու օր առաջ աղքատ և ընտանիքի տէր մի հայ դերձակի մօտ ծածուկ հրաւիրում են հարեան դալարին՝ վերջինս իսկոյն գալով, խոստանում է, որ ինքը անպատճառ կը բժշկէ, ի հարկէ, արիւն անհերքով, բայց զգալից հէնց արիւն անհերքում պէս իսկոյն մեռնում է:

Ահա այդպիսի զէպերն աչքի առաջ ունենալով, կառավարութիւնը յայտարարել է հետեւեալ որ կպցրած է բոլոր տան պատերից. «Ու՛մ տանը որ յայտնվեց հիւանդ՝ պարտաւոր է իսկոյն տեղեկութիւն տալ ոստիկանութեան, իսկ հակառակ զէպերում կենթարկվի պատասխանատւութեան»:

Պ. Գեորգեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Երկրագործութեան միջնորդ պետական քարտուղար Ա. Ս. Երմօլօֆը այս օրերս Պետերբուրգից մեկնեց զէպի Կովկաս:

Բագուի լրագիրները հաղորդում են, որ հունձն արդէն վերջացած լինելով, ամեն կողմից նկատվում է բանտերների առատ առատ հոսանք զէպի Բագու: Այսպէս, օրինակ՝ օգոստոսի 15-ին Աստրախանից և Սարատովից Բագու են եկել 278 հոգի, 18-ին—153 հոգի Կուրանի նահանգից, 18-ին—Վլադիկաւկազի գրծով գանապան քաղաքներից եկել են 400 բանտեր և այլն:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ անառակութեան վերահսկողութիւնը ոստիկանութեան ձեռքից առնվում է և յանձնվում քաղաքային վարչութիւններին:

«Ի. Բ.» լրագիրը հաղորդում է, որ գոյութիւն ունեցող բոլոր ատամնաբուժական զբաղողները մի ատամնաբուժական ինստիտուտի վերածելու հարցն արդէն վճռված է դրական մտքով ներքին գործերի մինիստրութեան կողմից:

Ռուսական Կարմիր խաչի ընկերութեան կովկասեան վարչութիւնը մեղ խնդրում է տըպագրել հետեւեալ հաշիւը. Կարմիր խաչի կովկասեան վարչութիւնն ստացել է մինչև ներկայ օգոստոսի 15-ը Կարմիր խաչի, պատեւաբով ժամանակի կարիքների, որբերի ու այրիների և նաւատորմի օգտին 84,046 ր. 75 կօպ., հաշիւով հեռը 600 ր. քէնտան—անում է 84,646 րուբլի:

ԲԱՌԹԻՄԻՅ մեղ գրում են. «Օգոստոսի 20-ին, ժամը 11-ին, ցերեկը, Մանթաշեան և ընկ. գործարանի գանձապահը, օրական մուտքը տանելու ժամանակ, ենթարկվեց մի քանի չարագործների յարձակման, որոնք բարձրանում են կառքի վրա և խուլ կապոցը: Մահայն որովհետեւ զէպը պատահում է գործարանի առաջ, այդ պատճառով չարագործներին չէ աշողվում կապոցը տանել և թողնելով փողերը սկսում են փախչել կրակելով բանտերների վրա: Մի քանի հոգի հետեւում են չարագործներին և վերջապէս աշողեցնում են ընկել մէկին: Մինչև դրանք ընկել հանում են կազակներ, որոնց շնորհիւ աշողվում է երկրորդին էլ ընկել: Վերադառնալով է գանձապահը թիւքից, և մէկ բանտը ձեռքից: Երկու օր է եղանակը այստեղ անձրեային է»:

Նիժնի-ՆՈՎՐՈՐՈՎԻՅ մեղ գրում են. «Այսօր, օգոստոսի 15-ին, տօնավաճառի հայոց եկեղեցում մի այնպիսի կենդանութիւն էր տիրում, որպիսին վերջին տասը տարիներում չէր տեսնված: Պատարագին, որին ներկայ էր Ընձակ վարսեց մի բազում, որով համոզում էր, թէ հայի մէջ խիղճ կայ, բայց քնած և թրեւած և որ հարկաւոր է միայն նրան դարթեցնել: Եւ պէտք է ասել, որ բարոյը հասաւ իր նպատակին: Պատարագից յետոյ նշանակված էր պ. Կ. Բէգիշեանի ներկայացրած հաշիւների ընկելը, որը, ի հարկէ, այնքան հետաքրքիր չէ, ժողովրդը, ի միջի այլոց վճռեց դիմել առաջնորդին և խնդրել ապագայում երգեցիկ խմբի աւելի տանել խումբ, երկրորդ՝ եկեղեցուց դուրս տանել մի քանի անաշող պատկերներ»:

ՍՈՒԴԱՂԻ գիւղից մեղ գրում են. «Սուրբաղի, Այսալայի, Օթուրի, Տառակաւաղի այգիները, այս քանի տարեկան երաշտի պատճառով, բաւական ֆլուսվեցին, իսկ այս տարի դեռնորդներով շատ այգիներ բոլորովին չորացան. մնացած թփերը միայն կարողացան աչքերը բանալ և այնպէս էլ մնացին, միայն երեքսարազ թփերը տուրն խաղող, այն ևս մնացին փոքրիկ գնդակների պէս և չորանալով թափվում են: Հազարաւոր վերք օգնի արտադրող այգիներից եթէ այս տարի ստացվի 40—50-ական վերք, փառք տալու է այն ժամանակ Ալլահին: Դրութիւնը շատ կրիտիկական է»:

ԿԱՂԱՌՈՒՄԻՆՑ մեզ գրում են. «Օգոստոսի 20-ի գիշերը քաղաքի կենտրոնում մի թիւրք երկուստեք խփեցին ատրճառակի երկու հարուստով. թէև դեռ չէ մահացել, բայց երկու կը մահանայ: Յիշեալ թիւրքը, որպէս արտասահմանից գաղտնի ապրանք բերող-վաճառող, թշնամիներ շատ ունէր»:

ԴՂԱՌՈՒՄԻՆՑ մեզ գրում են հետեւեալը. «Ամսիս 4-ին տեղի ունեցող ռուսացիների մահապատժումը տուին մի երկուրդ նորերս վախճանված ռուս տաղանդաւոր գրող Ա. Չէ-խովի յիշատակին: Մօսկվայում նոյն նպատակով բացվելիք ռուսահայրանի օգտին: Երեկոյն բաղկացած էր երկու մասից—գրական և երաժշտական, այսինքն կենսագրաբանագրական մի հատուած, որի մէջ պատկերացված էր նրա գործունէութեան չափը, ընթացքը, նրա գաղափարը, իդէալը, նրա գրութեաների ուղղութիւնը: Ապա կարդացվեցին հայերէն լեզուով «Գրիշա», «Դիմակ», ռուսերէն լեզուով «Մամէլէօն». իսկ երաժշտական մասում կային՝ նուագող մանդոլիններ խումբ, ախմադօնիմոնով solo վերջը դրվեցին կենդանի պատկերներ, որոնք ներկայացնում էին կտորներ «Երեք քայլ», «Վինտ» և «Պալատ № 6»-ից: Առանձին սեղանի մօտ վաճառվում էին Չէխովի դանդաղ ձևի պատկերները, լուսանկարները, վերջին աշխատութիւն «Вিশневый садъ» և նոյնպէս հայերէն զանազան թարգմանութիւններ նոյն հեղինակից: Ուսանողները և սիրողները, որոնց մէջ կան նոյն իսկ ծխական դպրոցաւարներ, յարգելով գրականութեան բարձր գաղափարը, կազմել էին այդ երեկոյնից. բայց սրտի ցաւօր պէտք է ասել, հակառակ յարգողների այդ բարձր ցանկութեան, հասարակութիւնը սակաւ էր»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԻՆԱԳՐՈՒՄԻ ԶՈՒՄԻՆ

Եսպանացիներ ծանր կորուստներ Պորտ-Սանտոյ մօտ: Տօկիոյում ևս սկսել են զգալ, որ եսպանական պաշարները գործը ծանր կորուստներ է կրում: Պատերազմական շրջանները գտնում են, որ Պորտ-Սանտոյի շուրջը աւելի շատ արիւն է թափվում, քան թափվել է որ և է կուտակ Սեղանից յետոյ: Մակայն եսպանացիները չեն կորցնում յոյժը վերջի վերջի գրաւելու քաջամարտիկական զգացումը (H. B.):

Լեւոսեանի կոնսուլի մասին: Թէև, ինչպէս հայտնի էր հեռագրի միջոցով, եսպանացիները արդէն գրաւեցին Լեւոսեանը, բայց այնու աւանդին խիստ հետաքրքրական են այն բոլոր տեղեկութիւնները, որոնք վերաբերում են այդտեղ կատարված արեւմտահայ կոնսուլի մահապատժումը: Օգոստոսի 17-ից, Լեւոսեանից հեռագրում են «Руб» լրագրին. «Հասաւ պատմական րօպէն. սկսվեց ճակատամարտը Լեւոսեանի մօտ: Դեռ ժամը 6-ը չը կար, երբ թիւրքաց առաջին թնդանօթային հրաձգութիւնը, որից յետոյ, երկու ճակատների վրա են, հարուստին և արեւելեան, միասնական դրոշմի նշաններով թնդանօթային: Եթէ ընդունենք ռուսական դիրքերի իրեն կենտրոն յայտնի Լեւոսեանի աշտարակը, այն ժամանակ կարելի է ասել, որ կռիւն դեռ շատ հեռու է, տեղ-տեղ նոյն իսկ 10 վերստի վրա, բայց քաղաքի ծայրերում արդէն պարզ լսվում է ուռնակների թռիչքը: Այսօր երկու կողմից ևս մահապատժում են բերվել հեռագրի թնդանօթային: Չինացի ժողովուրդը լսել է. պիտաւոր փոփոխւոյ, որ, սովորաբար վաղ առաւօտից մինչև արեւի մայր մտնելը, մի բազմախումբ բազար էր ներկայացնում, այժմ գիշերվալ նման լուռ է: Տեղ-տեղ տանիքների և աշտարակների վրա նկատվում են հետաքրքրելիքներ. մնացածները թափառում են մօտավոր. ինչքան առաջ կը գնայ կռիւն. կը տեղանջ նաև քաղաքի վրա, ինչ կը լինին սպորտները և նրանց գոյութիւնը»:

Նոյն կռիւների մօտին «Правит. Вѣст.» լրագրին հեռագրում են Լեւոսեանի, դարձեալ օգոստոսի 17-ին. «Օգոստոսի 11-ին սկսված եսպանացիների արշաւումը Լեւոսեանի վրա առաջ տարվեց նրանց կողմից անընդհատ և եռանդուն կերպով: Մենք նախաջնում էինք կռիւով, և արդէն երկէ Լեւոսեանի վրա շուրջային հրաձգութիւններ կայծերը և լսվեց պարզ նրանց որոտումը: Այսօր, վաղ առաւօտեանից, Լեւոսեանը շրջապատող սարերի վրա որոտում է, առանց մի րօպէ դադարելու, արտիլերիական կռիւն: Լեւոսեանը դարձաւ հակա-յական արեւմտահայ զէպրերի կենտրոն: Նա պատրաստվել էր այդ բանին, պատրաստ

կանգնած են սանիտարական գնացքները, ուրիշ գնացքներ դեռ բերում են հեռագրի ուսանողներ, ֆուրածի, արտիլերիական և հրացանային փամփուռների պաշարներ: Այսօրվա կռիւն, դա, հաւանօրէն—միայն արտիլերիական խուզարկութիւն է եսպանացիների կողմից դէպի ռուսաց զորքերի տեղաւորման վայրը»:

«Berl. Tageb.» լրագրի պատերազմական ընթացքը հետեւեալ կերպով է լուսարարում Լեւոսեանի գրութիւնը: Ենթադրելով, որ Կուրօպատկինը ներկայումս ունի Լեւոսեանում 180,000 մարդ 240,000 եսպանացիների դէմ, որոնք միացված են մարշալ Օլեանի ընդհանուր հրամանատարութեան ներքոյ և, յիշեցնելով, որ գեներալ Կուրօպատկինը մեծ աշխուժութիւն կայանում է նրա մէջ, որ նա կարողացաւ երեք շաբաթով յետ պահել Լեւոսեանի վրա առաջ սկսված շարժումը և այդ միջոցին էլ սաստիկ ուժեղացրեց իրան, հեղինակը ապա գրում է. «Լեւոսեանի բարձրութիւնները վրա Կուրօպատկինը գրաւել է չափազանց ուժեղ դիրք. այդ դիրքը կազմված է մի քանի շարքերով միմեանց հետեղ պատնէշներից, որոնք պատսպարում են պաշտպանութեան համար կարեւոր բոլոր բարձրութիւնները: Այդ պատնէշների մուտքերը պաշտպանված են ականներով և երկաթաթելային ցանցերով: Պահեստների համար կան բազմաթիւ ստորերկրային կցարարներ, ծածկված երկաթաթելային ձողերով և թիթեղ, որոնք ներկայացնում են յուսալի պաշտպանութիւն ռուսներին: Ծածկված ստորերկրային ուղիները միացնում են պաշտպանութեան ամբողջ զօն առանձին կետերը, որոնք, բացի դրանից, հաղորդակցութիւն ունեն միմեանց հետ հեռագրակցութեամբ: Ռուս գեներալ Վէլիչկով, որ վախճում է չափազանց ընդունակ ինժեների համար, ստեղծել է Լեւոսեանում հզօր ամբարձրութիւններ, որոնք հնարաւորութիւն են տալիս և աւելի նուազ թուով կողմին յոյս դնել կատարելաւ ամրութեան վրա կռիւ մէջ: Լեւոսեանի ամրութիւնների հետ կռիւ կարող է միայն խիստ ուժեղ արտիլերիա: Շատ կատարելաւ է, որ եսպանացիները ներկայումս ունենան Լեւոսեանի մօտ բաւականաչափ արտիլերիա, որովհետև նրանց պաշարողական հրետանիները հաւաքված են Պորտ-Սանտոյի մօտ: Այդ հանգամանքը բոլոր է և կը լուծէ այն հանելուկը, թէ ինչու եսպանացիները այնքան երկար դանդաղում էին արշաւել Լեւոսեանի վրա: (B. Вѣд.)

Եթէ այսպիսի դժուր դիրք էին գրաւել գեներալ Կուրօպատկինը գործերը և այնու ամենայնիւ անհրաժեշտ եղաւ նախաջնումը, պէտք է երեկոյան, թէ որպիսի տուկալի տար կը ունենան տեղի ունեցել և որքան մեծ եղած պէտք է լինի երկու կողմերի կորուստները:

Բերլինից հեռագրում են օգոստոսի 17-ին, թէ այդտեղի գիւղերական ռուսաց շրջաններում գործերի թիւը Լեւոսեանում հաշուում են 190,000, իսկ եսպանացիներինը—240,000: Կուրօպատկինը բանակի երկու թևերի հետ, մինչև այժմ այդ մահապատժումը նրան չէ աջողվել: Դեռ անյայտ են, թէ ինչ ոյժեր եսպանացիները յետ են պահել Բենսիլիսի մօտ, Լեւոսեանից հիւսիս-արեւելք, այն նպատակով, որ շրջանային շարժումը գործեն որոշվալ րօպէին: Մասնաւոր լուրերին նայելով, գեներալ Հերշելմանի զինվորական նշանաւոր կորուստներ է կրել: Եսպանական թնդանօթային թիւը հասնում է 700-ի (T. A.)

«Daily Telegraph» լրագրին հաղորդում են Լեւոսեանից օգոստոսի 17-ին. «Առաւօտեան ժամը 6-ին եսպանացիները սարսափելի թնդանօթաձգութիւն սկսեցին: Տեղացիների մի մեծ բազմութիւն բարձրացել էր տներին տանիքներին և ուրիշ բարձր տեղերի վրա՝ դիտելու համար կռիւ: Ռուսները պայթում են մեծ ճռճոցով: Ռուսները զարմանալի եռանդով դիմադրում են եսպանացիներին: Ասում են, բաղաբը լի է ծպտեալ խուսափողներով: Եսպանացիները ուղղում են յարձակումը, գլխաւորապէս Տայիւն գետի դէմ, գործ գնելով խոշոր թնդանօթները»: (P.)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բաթումից մեզ գրում են. «Տրապիզոնից առնված գնազան նամակներ մեզ հաղորդում են, որ բանտարկված 40—50 երիտասարդներից 23-ը անմեղ ճանաչվելով արձակված են: Մնացեալների դատաւարութիւնը տեղի պիտի ունենայ սուլթանի գահակալութեան տարեգարծից յետոյ»:

—«Hob. Bp.» լրագրին հաղորդում են Կ.

Պօլսից, որ՝ նախկին սուլթան Մուրադը, այս դժբաղդ իշխանը, որ 28 տարուց աւելի բանտարկված էր Չարագանի պալատում, վախճանվեց: Ինչպէս յայտնի է, Մուրադը հազիւ 4 ամիս թագաւորեց:

—Ամերիկայի Միացեալ-Նահանգների և Թիւրքիայի մէջ ծագած ընդհարումը համարվում է հարթված: Բ. Դուռը հաստատ մնաց իր կարծիքի վրա, իսկ ամերիկական դեսպանը յետ վերջից իր պահանջներից ամենաշատ մեղադրելով Մակայն ժողովուրդը, զգուշ իրան աւրած գիշերօթիկով, մտադրվել են աւելի վաճառական քաղաքականութիւն վարել Թիւրքիայում: Դրա հիմքը արդէն դրված է ասիական Թիւրքիայում: Ամերիկացի միսիոնարները իրանց ընտիր կազմակերպած դպրոցներով Փորը-Ասիայում հանդիսանում են այդ քաղաքականութեան պիտանքներ: Ամերիկական հայկական դպրոցական պրօպագանդային ի պաշտպանութիւն կանգնած են այնպիսի ազգայնիկ շրջաններ, որ ամեն մի կառավարութիւն ստիպված է հաշի առնել նրան: (Hob.)

—Այժմ, երբ Ռուսաստանի գլուխը խառն է հետադուր Արեւելքում, ամերիկական լրագիրները գնազան ծրագրեր են նախադրում: Բարտիմօրի լրագիր «Catholic Mirror» թերթը հանգէ է եկել մի ծրագրով, թէ ինչպէս խաղաղացնել Եւրոպայի Եւրոպայի խաղաղացումը նա տեսնում է Թիւրքիայի բաժանման մէջ, որովհետև Թիւրքիան է պատճառ, որ միշտ իր անտանելի կարգերով յուզում, խռովում է Եւրոպան: Թիւրքիայի բաժանումը—ասում է լրագիրը—ներկայումս շատ հեշտ իրագործելի ծրագիր է, քանի որ Ռուսաստանի գլուխը խառնված է ուրիշ տեղ: Նա առաջարկում է Թիւրքիան բաժանել այսպէս. Գերմանիային տալ—Սիրիան, Պալեստինը և Միջագետքը: Անգլիային տալ Կարսի ծովի և Պարսից ծովի (P.) ափերը, Իտալիային—Ալբանիան, Մակեդոնիան և Տրիպոլիսը, Աւստրիային—Բոսնիան, Հերցեգովինան և Սերբիան (?), Ֆրանսիային—Բոսֆորը և Փորը-Ասիան: (H. Bp.)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

22 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գեներալ-լէյտենանտ Սախարովի հեռագիրը գլխաւոր շտաբին 1904 թւի օգոստոսի 20-ից. «Ներկայ օգոստոսի 20-ին մեր զորքերը յարձակում գործեցին բարձունքների վրա Սիկվանտունի մօտ, 16 վերստ դէպի արեւելք Լեւոսեանից, Տայգիլիէ գետի աջ ափի վրա: Ցամառ կռիւց յետոյ մենք վերջինք լուսային ամբողջ օտարի դէպի արեւմուտը Սիկվանտունից: Մի և նոյն ժամանակը պարզվեց, որ մենք գործ ունենք բազմաթիւ եսպանական զորքերի հետ, որոնք գրաւած ունեն ճակատը բարձունքներից: Ենտալեան հանքերի մօտ և մինչև Տայգիլիէ գետը Գեներալ-մայոր Օրլովի զորաբաժինը, որ պաշտպանում էր Ենտալեան հանքերը և որը մի փոքր առաջ էր ընկել, հանդիպեց գերազանց ոյժերին զօրեղ դիրքի վրա և ստիպված էր յետ բաշվել: Գեներալ Օրլով վերաւորվեց, բայց հակառակորդի շարժման վտանգը դէպի Ենտալեան կայարանը նախաջնողների հետեղ անցաւ. մօտենում էին առաջին սերբերան զօրաբաժինը քաջ գնդերը և գեներալ Շտակել-բեքը կանգնեցրեց յարձակվող եսպանացիներին: Այդ կռիւ ժամանակ ծանր վերաւորվեց 2-դ սերբերական գնդի աչքի ընկնող հրամանատար գնդապետ Օլեքսանդր: Երեկոյան 9 ժամին կռիւն հանդարտվեց ամբողջ զօն վրա: լսվում էին միայն թնդանօթաձգութեան ձայներ Լեւոսեանի մօտ: Լեւոսեանի բերդապահ զօրքերը տէլեֆօնով ստացված գիւղացւան համեմատ, յետ մղեցին և երկրորդ յարձակումը. իսկ հակառակորդի ոյժերը պարզելու համար արեւմտեան ճակատից յարձակում գործեցին երկու գնդերով. այդ ժամանակ, տար կռիւց յետոյ, պարզվեց, որ այդ երկու գունդը գործ ունեն երկու զինվորային աւելի ոյժերի հետ: Չօրքի ընդհանուր կորուստները այսօրվայ ընթացքում ճիշդ պարզված չեն, բայց, արդէն ունեցած փաստերի հիման վրա, աւելի է երեք հազար պահուստներից և վերաւորվածներից:

Գեներալ-ադիւտանտ Կուրօպատկինի ամենահպատակ հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով 1904 թւի օգոստոսի 21-ից. «Այս գիշերը թշնամին սկսեց յարձակում գործել և արեւելք մեր գրաւած դիրքերի մեծ մասին: Այդ դիրքերը գրաւող մեր զօրքերը յետ բաշվեցին դէպի վերջապահ դիրքը 2-րդ ստանտուն-Շիլչեւի և Սիկվանտուն գիւղերի գծի վրա, կէս տարածութեան վրա Լեւոսեանի Սիկվանտունի միջև: Լոյս այսօրվայ գիշերը 1-ին սերբերական զօրաբաժինը, որը վերջին 5 օրը ծանր կորուստներ կրել և երկու ու-

նէր շրջապատված լինելու գերազանց ոյժերից, մի քանի վերստ հեռացաւ արեւմտեան ուղղութեամբ: Այդպիսի պայմաններում ես հրամանագրեցի մարքել Լեւոսեանը և հեռանալ դէպի հիւսիս»:

22 օգոստոսի

ՏՕԿԻՕ, 20 օգոստոսի: (Վօլֆի գործ.): Մէուլից պաշտօնապէս հաղորդված է, որ Պետերբուրգի կորէյական դեսպան Իպօմլին արձակված է իր պաշտօնից իր կառավարութեան կողմից:

ՏՕԿԻՕ, 21 օգոստոսի: (Բէյտէր): Կարծում են, որ Տայգիլիէ գետի հարաւակողմը գտնվող Օյամայի գլխաւոր ոյժերին աջողվել է այսօր առաւօտ անցնել գետով: Կուրօպի գրաւեց Նէյսանայ բարձունքների մի մասը և մտադրութիւն ունի այսօր տիրել երկաթուղուն: Ռուսները, ըստ երեկոյնի, կենտրոնացնում են Ենտալեան ածխահանքերի մօտերը:

ԼՕՆԴՈՆ, 21 օգոստոսի: (Բէյտէր): Եսպանական միսիոնար ստացաւ հետեւեալ հեռագիրը Տօկիոյից. «Օյամա գիւղացւանում է, որ թշնամու ոյժերը, որոնք կանգնած էին մեր ձախ և կենտրոնական զօրաբաժինների հանդէպ, օգոստոսի 20-ին շարունակում են յետ նահանջի դէպի Տայգիլիէի աջ ափը, բացի զօրքերի այն մասից, որը գրաւած ունի Լեւոսեանի հարաւից դէպի հիւսիս-արեւմուտը գնացող ամբարձրութիւնները, նոյնպէս և Մուլանից դէպի հիւսիս-արեւելք գտնվող բարձունքը: Մեր զօրաբաժինները շարունակում են առաջ արշաւել: Մեր աջ զօրաբաժինը օգոստոսի 20-ին առաւօտեան գրաւեց բարձունքների մի մասը 2-րդ ստանտունից դէպի արեւմուտը: «Լոյի-գին» Մայգօնից հաղորդում են, որ ռուսական «Դիանա» կրէյսէրի վաչագած մասերը կարկատվում են: Նա կը բեռնաւորվի ածխով:

ԼՕՆԴՈՆ, 21 օգոստոսի: Ասում են, որ գեներալ Կուրօպատկին յայտնեց իր շտաբին, որ նրա նպատակը՝ կանգնեցնել եսպանացիների յարձակումը՝ իրագործված է, բայց որ ներկայումս անպայման անհրաժեշտ է համարվում հասնել Մուկդէնին:

ՎԻԳՕ, 21 օգոստոսի: (Հաւասի գործ.): Այստեղի ձկնորսների նկատեցին Տիէս կղզու մօտ ռուսական «Դոն» կրէյսէրը: Այդ կրէյսէրը սպասում է այստեղի նաւահանգստից անգլիական շոգենաւի դուրս գալուն, որը ուղղում է իր ստացած ֆետալածները: Լուրեր են պլտրում, որ այդ շոգենաւում ածուխի բեռան տակ ծածկված են թնդանօթներ:

ՅՁԻՆԴԱՆԻ, 20 օգոստոսի: (Բէյտէր): Վերաւորված կօտոր-ծովապետ Մատուսէվիչ խօսակցութեան մէջ ասեց, որ ամենաուսանելիին ժամանակակից ծովային պատերազմի մէջ անթիւ հեռագրի նշանակութիւնն է, որ գործադրվում էր վերջին ծովային կռիւի մէջ այնքան ժամանակ, մինչև որ բոլոր ապագայաները չօչնչացան ռուսներից: Բաղիւրացիները բանում են աւելի լուս և արագ մինչև այժմ գործադրվող գրօշակա-ազդանշաններից: Լոգացող ականների դէմ ուրիշ միջոց չը կայ, բայց ի՞նչ առաջաց ուղարկել յատուկ մարդու նաւերը, որոնց պէտք է հետեւ պատերազմող էսկադրան: Ականանաւերը չարադարացին նրանց վրա դրված յոյսերու: Եսպանացիները մի գիշերվալ ընթացքում 15 յարձակումներ գործեցին ականանաւերով, բայց առանց որ և է աշխուժեցնան: Մի քանի պատերազմական նաւեր, որոնք գործում են միայն ցուլացուցիչներով, կարող են իրանց ապահոված համարել ականանաւերի յարձակումներից: Կրիւնօրները ականների դէմ պատերազմական նաւերի վրա օգուտ չեն բերում, այլ արգելք են դառնում նաւերի երթևեկութեանը և ուղարկում են նրանց ընթացքը: Եսպանական զինուորացիները ծովային կռիւների մասին ճիշդ չեն, որովհետև լուրերում են անցնում իրանց կորուստները: Մատուսէվիչ դեռ ևս լուրջ հիււանդ է:

ՀէԼՍԻՆԿԻՅՈՐՄ, 21 օգոստոսի: Օգոստոսի 6-ին գեներալ-նահանգապետ իշխան Օթօլինսկուհիները պաշտօնապէս ֆինլանդական պատգամաւորութիւնը: Օթէր-պատուր Եօհանսոն ճառ արտասանեց: Ծառը լսելուց յետոյ, իշխան Օթօլինսկին պատասխանեց. «Ֆինլանդական գեներալ-նահանգապետի պաշտօնի վրա ինձ նշանակելուց յետոյ արժանացայ թագաւոր Կայսրի ուղղմամբ խօսակցութեան, և խորապէս համոզված եմ, որ Նորին Մեծութեանը լցված է սիրով դէպի Ֆինլանդական հպատակները: Ներկայումս ձեզ յայտնի է այն Բարձրագոյն կամըրը, որ արտայայտվեց Բարձրագոյն հրօս Սիկվանտունի միջև: Լոյս այսօրվայ գիշերը 1-ին սերբերական զօրաբաժինը, որը վերջին 5 օրը ծանր կորուստներ կրել և երկու ու-
